ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դ. 70-ական թթ.), «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1978, 353 էջ։

Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության մեջ ոչ մի հարց այնքան չի հանդիսացել պատմաբանների, գրողների, հրապարակախոսների սեռեռուն ուշադրության առարկա և ոչ մի խնդիր չի ենթարկվել այնպիսի համակողմանի քննության, որքան 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և նրա հետևանքով հայկական հարցը միջազգային մեծ քաղաքականության ոլորտ մուտք գործելու և եվրոպական դիվանագիտության քննության առարկա դառնալու հարցը։

Սակայն չնայած հիշյալ խնդրի վերաբերյալ տարբեր ուսումնասիրությունների առկայությանը և առհասարակ բազմապիսի նյութերի առատությանը, մինչև օրս հրապարակի վրա չկար հատուկ հետազոտություն, որը մարքսիստական դիրքերից, այլալեզու դրականության և արխիվային փաստաթղթերի հիման վրա համակողմանի վերլուծության ենթարկեր հայ ժողովրդի պատմության այդ կարևորագույն շրջանի դրվագները։

Ջ. Կիրակոսյանի գրախոսվող աշխատությունը գալիս է լրացնելու այդ բացը։ Մենագրության հեղինակը մանրակրկիտ կերպով լուսաբանում է միջազգային իրադրության և թուրքական իրականության այն պրոբլեմները, որոնց մեջ եփվում էր հայկական հարցը, վերլուծում և առանձին դեպքերում նորովի գնահատականներ է տալիս թե՛ եվրոպական և թե՛ հայ այն գործիչների գործունեությանը, որոնք առնչվում էին հայ ժողովրդի արևմտյան հատվածի քաղաքական ճակատագրին։ Ուսումնասիրության կարևոր արժանիքներից մեկն այն է, որ նրանում հայկական հարցը քննվում է Ռուսաստանի, արևմտաեվրոպական տերությունների և Օսմանյան կայսրության դիվանագիտական փոխհարաբերությունների ֆոնի վրա, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու հայկական հարցի նկատմամբ բուրժուական դիվանագիտության վերաբերմունքի բազմապիսի կողմերը։

Հանգամանալից քննության ենթարկելով արևելյան հարցի էությունը և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող հայկական հարցը, հեղինակը որպես ելակետ է ընդունում այն ճշմարիտ տեսակետը, որ անկախ Մերձավոր Արևելքում և Բալկաններում ցարիզմի հետապնդած գաղութակալական նպատակներից, Ռուսաստանի արևելյան քաղաքականությունն օբյեկտիվորեն համընկնում էր Բալկանյան թերակղզու և Անդրկովկասի ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի ազատագրական ձգտումների հետ։ Այս թեզը, որը կարմիր թելի պես անցնում է ողջ աշխատության միջով, Ջ. Կիրակոսյանը զարգացնում է՝ հանգամանալից վերլուծության ենթարկելով Արևմտյան Հայաստանի քաղաքական վիճակը, նրա նկատմամբ թուրքական կառավարության, տնոր ազգաններին» և արևմտյան տերությունների՝ մասնավորապես Մեծ Բրիտանիայի կողմից իրականացվող քաղաքականության նրբերանգները։ Ընդ որում, քայլ առ քայլ հետևելով արևմտահայ և արևելահայ հասարակական-քաղաքական կյանքի ելևէջներին, հեղինակը վավերագրերի հիման վրա ցույց է տալիս, որ հայ ժողովրդի ամենատարբեր դասակարգերի ու խավերի մոտ տիրապետող էր դառնում այն մտայնությունը, թե թուրքական հեղձուցիչ իրականությունից ազատվելու միակ ուղին ռուս ժողովրդին և ռուսական պետականությանն ապավինելու ճանապարհն է։

Հեղինակը հերքում է ժամանակակից թուրքական պատմագիտության այն կեղծ տեսակետը, թե իբր հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներն ինքնաբուխ չէին, որ դրանք արհեստականորեն հրահրվում էին եվրոպական դիվանագիտության կողմից։

Անդրադառնալով Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքման մանրամասներին, Ջ. Կիրակոսյանը, հակառակ բուրժուական պատմագիտության մեջ լայն տարածում գտած այն տեսակետին, թե իբր պայմանագրի մեջ հայկական հարցի վերաբերյալ հատուկ կետ մտցնելու նախաձեռնությունը գալիս էր ռուսական դիվանագիտության կողմից, որը միտում էր այդ հարցն

«գտագործել որպես լծակ՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և հավելյալ զիջումներ ստանալու համար. անդրադարձի փաստերով ցույց է տալիս, որ այդ քայլը բխում էր բացառապես հայերից։ Սա էական հշտում է, որովհետև անգլիական «Կապույտ գրքերը» պնդում են այն հերյուրանքը, թե իբր Հայաստանի ինքնավարությունն արտաքոց ու մտացածին բան էր, ռուսների սադրանք։ Այդ «տեսակետը» ժխտվում է նաև նրանով, որ վերլուծելով Սան-Ստեֆանոյի պայմանագրի հայկական հարցին վերաբերող 16-րդ հոդվածը, հեղինակը ցույց է տալիս, որ նրա «սահմանումը այն էքսպրոմտի արդյունքն էր, երբ հայկական հարցը դիվանագիտության մարզում հարուցվեց հանպատրաստից» (էջ 138)։

Ինչպես եվրոպական տերությունների սուր հակասությունները, Մեծավոր Արևելքի միջազգային դրությունը, օսմանյան կառավարության վերաբերմունքը 16-րդ հոդվածի նկատմամբ և այլն, հեղինակը բացահայտում է, որ թեև Սան-Ստեֆանոյի պայմանագրի համապատասխան կետը խիստ թերի էր մանավանդ այն պատճառով, որ նրանում ոչ մի հիշատակություն չկար Արևմտյան Հայաստանում Թուրքական կառավարության կողմից բարեփոխություններ իրականացնելու նկատմամբ Ռուսաստանի հսկողության եղանակի մասին և առհասարակ այդ հոդվածն ավելի էր ընկնում իր անորոշությամբ, սակայն այդ բոլորով հանդերձ նա պարունակում էր մեծ խորհուրդ այն առումով, որ նրա գործնական իրականացման դեպքում Արևմտյան Հայաստանը վեր էր ածվելու Ռուսաստանի ազդեցության ոլորտի, իսկ հայ բնակչությանը դրվելու էր նրա հովանավորության տակ։ Սրանով է բացատրվում այն իրողությունը, որ արևմտաեվրոպական տերություններն ըստ էության միացյալ ճակատ կազմեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրի դեմ՝ Բալկաններում և Հայաստանում ռուսական դենքի հաղթանակը նսեմացնելու և նրա արդյունքները դերոյի հավասարեցնելու համար, միևնույն ժամանակ աշխատելով իրենց առավելագույն բաժինը պոկել օսմանյան ժառանգությունից։ Միացյալ ճակատի պլատֆորմն էր այն տեսակետը, որ սոցիալական ու քաղաքական հակասությունների մեջ մերձված ու քայքայված Օսմանյան կայսրության պահպանումը, նրա ստատուս-քվոն ավելի ձեռնտու են իրենց, բան նրա փլուզումն ու մասնատումը հօգուտ Ռուսաստանի։ Ահա թե որն էր հայկական հարցի անլուծելիության գաղտնիքը։ Մինչդեռ, ինչպես փաստերով ցույց է տալիս Ջ. Կիրակոսյանը, հայ ժողովրդի ղեկավարները՝ «ազգի առաջնորդները», անտեղյակ եվրոպական դիվանագիտության գաղտնիքներին, անիրազեկ խարդախ Ալբիոնի խաղերին, «շարունակում էին վարդագույն հույսեր կապել իրենց շահը փնտրող գաղութատեր կառավարությունների հետ», հիմքում ունենալով նրանց «քրիստոնեասիրությունը», «խիղճը» և «մարդասիրությունը» (էջ 146)։

Թե՛ արևմտյան և թե՛ սովետական պատմագիտությունը համեմատաբար թույլ է ուսումնասիրել Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքումից մինչև Բեռլինի կոնգրեսի գումարումն ընկած միջանկյալ շրջանի դիվանագիտական պատմությունը՝ կապված հայկական հարցի հետ։ Ջ. Կիրակոսյանը հատուկ ուշադրություն է դարձնում այդ շրջանի խնդիրների բացահայտմանը, առաջ քաշելով և հիմնավորելով մի շարք տեսակետներ, որոնք աչքի են ընկնում հարցադրումների նորությամբ և եզրահանգումների ուշագրավությամբ։

Աշխատության ուշագրավ ու հետաքրքիր բաժիններից է «Հայոց պատվիրակները Եվրոպայում և Պետերբուրգում» գլուխը։ Այստեղ մանրամասնորեն շարադրվում է արևմտահայ տարբեր հասարակական-քաղաքական հոսանքների, դասակարգերի ու խավերի վերաբերմունքը հայկական հարցի և նրա լուծման ուղիների նկատմամբ։ Մասնավորապես ցույց է տրվում, որ թեև միևնույն խնդիրների արծարծման, միևնույն նպատակների իրագործման ասպարեզում առկա էին հակոտնյա մոտեցումներ, որոնք հետևանք էին տարբեր դասակարգերի շահերի, սակայն հայրենասիրության, հայրենիքի գաղափարի հողի վրա ստեղծվել էր շահերի որոշակի մերձեցում։ Հատկապես ուշագրավ է հեղինակի կողմից արևմտահայ և ռուսահայ բուրժուազիայի մոտեցումների բացահայտումը ազգային-ազատագրության ու հայրենիք ստեղծելու խնդիրներին։

Թեև Բեռլինի կոնգրեսում հայկական հարցի թեման հանդիսացել է հայ նախահեղափոխական շրջանի և սովետահայ պատմագիտության սևեռուն հետաքրքրության առարկաներից մեկը և այդ խնդրի մասին առկա են զգալի քանակությամբ ուսումնասիրություններ, սակայն Ջ. Կիրակոսյանը, ի տարբերություն իր նախորդների, հարցի քննությունը կատարում է կոմպլեքսային ձևով, խորամուխ լինելով եվրոպական դիվանագիտության գլոբալ, ստրատեգիական նշանակություն ունեցող տեսակետների մեջ, պակաս կարևորություն չտալով նրա տակտիկական քայլերի նրբերանգներին, այդ բոլորը քննելով իրենց փոխկապակցության մեջ։ Նա բացահայտում է իրադարձությունների այն ներքին դրդապատճառները, որոնք պատճառ հանդիսացան, որպեսզի Բեռլինի կոնգրեսում իմպերիալիստական տերությունները հա-

մախմբվեն Անգլիայի կողմից ձևակերպված տեսակետների շուրջը՝ Ռուսաստանի հաղթանակի արդյունքներն ի չիք դարձնելու, հայկական հարցը մեռցնելու և սլավոնական ժողովուրդների իրավունքները բռնադատելու ուղղությամբ։

Կանգ առնելով Բեռլինի կոնգրեսում հայկական հարցի ձախողման բուն պատճառների վրա, հեղինակը իրավացիորեն նրանցից կարևոր է համարում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման, զինված պայքարի և հավաքական ուժի բացակայությունը։ Պատահական չէ, որ կոնգրեսից հետո իր հավատը կորցնելով եվրոպական տերությունների նկատմամբ, արևմտահայությունը որոշում է ապավինել իր սեփական ուժերին՝ զարկ տալով ազգային-ազատագրական պայքարին։ Սակայն դրա կողքին շարունակում էր իր գոյությունը պահպանել եվրոպական դիվանագիտության օգնությամբ թուրքական լուծը թոթափելու և սեփական պետականություն ստեղծելու մտայնությունը, որը դժբախտաբար դարձավ հայ ազգային ու ազգայնական կուսակցությունների հիմնական գործելակերպը, և որը ոչինչ չտվեց ու չէր կարող տալ հայ ժողովրդին, բացի նոր տառապանքներից ու հուսախաբություններից։ Ավելին, այդ գիծը սկսած Բեռլինի կոնգրեսից ճակատագրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար, որովհետև թուրքական տիրապետող շրջանները վերջնականապես որդեգրեցին հայկական հարցը հայերին ֆիզիկապես ոչնչացնելու ճանապարհով լուծելու ծրագիրը, որի հիմքը դրեց հանգուցյալ «արյունոտ սուլթան» Աբդուլ Համիդ II-ը, և որին 1915 թ. եղերական տարում վերջակետ դրեցին իթթիհադականները՝ բարբարոսական ձևերով բնաջնջելով հայ ժողովրդի արևմտյան հատվածը։

Աշխատությունում հեղինակը չի անդրադառնում XIX դ. 80—90-ական թվականներին արևմտահայության դրության և հայկական հարցի միջազգային արծարծումների խնդրին. խոստանալով այդ հարցերին անդրադառնալ հետագայում, սակայն նպատակահարմար կլիներ թեկուզ և ընդհանուր գծերով բնութագրել հիշյալ ժամանակաշրջանում հայկական հարցի հանգուցային պրոբլեմները։ Այնուհետև, աշխատությունը զգալիորեն կշահեր, եթե հեղինակն ավելի հանգամանորեն անդրադառնար հայ ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ եվրոպական դիվանագիտության բռնած դիրքին։

Ինչպես նշեցինք, հայ ժողովրդի պատմության նոր շրջանի թերևս ոչ մի հարց այնքան մեծ ուշադրության առարկա չի հանդիսացել, ինչպես խնդրո առարկա պրոբլեմը։ Հետևաբար, հեղինակը ճիշտ վարված կլիներ, եթե տար գրականության տեսություն, ընթերցողին ներկայացնելով հայ և օտար հեղինակների այդ ուղղությամբ կատարած ուսումնասիրությունները։

Ջ. Կիրակոսյանի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ հայ ժողովրդին սոցիալական և ազգային ազատագրություն կարող էր բերել և բերեց հին աշխարհի դեմ ռուսաստանյան հեղափոխական պրոլետարիատի հաղթական պայքարը, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը հայ ժողովրդին ոչ միայն փրկեց ֆիզիկական բնաջնջումից, այլև հնարավորություն ընձեռեց ստեղծելու ազգային հավաքականություն և կերտելու հայրենիք։

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր